ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2026-3-5-Ա

ք. Երևան 08.04.2026թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2026 թվականի ապրիլի 8-ի նիստում քննարկեց 2025 թվականի սեպտեմբերի 11-ին արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված՝ «Chatham Imports, Inc.» ընկերության (245 Fifth Avenue, Suite 1402 New York NY 10016, US) «FARMER'S» (IR1774495) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 93-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ այլ բնութագրերը նշելու համար: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ բացառապես բաղկացած է «FARMER'S» (թարգմ.՝ ֆերմերի) նկարագրական բնույթի գրառումից, որն առևտրում ծառայում է ապրանքի տեսակը, տեսակային անվանումը նշելու համար (նկարագրում է, որ տվյալ խմիչքը արտադրված է ֆերմերի կողմից), հետևաբար չունի տարբերակիչ հատկություն և կարող է օրինաչափ ձևով օգտագործվել բոլորի կողմից: Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ապրանքային նշանը նիշ է, որն օգտագործվում է մեկ անձի ապրանքները և (կամ) ծառայություններն այլ անձի ապրանքներից և (կամ) ծառայություններից տարբերելու համար, հետևաբար ապրանքային նշանն իր հիմնական ֆունկցիան կատարելով և որպես ապրանքային նշան ծառայելով, պետք է սպառողին հնարավորություն ընձեռի մեկ տնտեսվարողի ապրանքներն և (կամ) ծառայությունները մեկ այլ տնտեսվարողի ապրանքներից և (կամ) ծառայություններից տարբերելու համար, իսկ հայտարկված ապրանքային նշանը

վերոնշյալ հատկությունը չունի: Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն ապրանքային նշանը չի կարող բաղկացած լինել միայն այնպիսի տարրերից, որոնք ենթակա չեն գրանցման որպես առանձին ապրանքային նշաններ:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ այլ բնութագրերը նշելու համար: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ բացառապես բաղկացած է «FARMER'S» (թարգմ.՝ ֆերմերի) նկարագրական բնույթի գրառումից, որն առևտրում ծառայում է ապրանքի տեսակը, տեսակային անվանումը նշելու համար (նկարագրում է, որ տվյալ խմիչքը արտադրված է ֆերմերի կողմից), հետևաբար չունի տարբերակիչ հատկություն և կարող է օրինաչափ ձևով օգտագործվել բոլորի կողմից: Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ապրանքային նշանը նիշ է, որն օգտագործվում է մեկ անձի ապրանքները և (կամ) ծառայություններն այլ անձի ապրանքներից և (կամ) ծառայություններից տարբերելու համար, հետևաբար ապրանքային նշանն իր հիմնական ֆունկցիան կատարելով և որպես ապրանքային նշան ծառայելով, պետք է սպառողին հնարավորություն ընձեռի մեկ տնտեսվարողի ապրանքներն և (կամ) ծառայությունները մեկ այլ տնտեսվարողի ապրանքներից և (կամ) ծառայություններից տարբերելու համար, իսկ հայտարկված ապրանքային նշանը վերոնշյալ հատկությունը չունի: Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն ապրանքային նշանը չի կարող բաղկացած լինել միայն այնպիսի տարրերից, որոնք ենթակա չեն գրանցման որպես առանձին ապրանքային նշաններ::

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կրկնական փորձաքննության արդյունքում կայացված որոշումը իրավաչափ է:

Բողոքարկողի ներկայացուցիչը կարծում էր, որ հայտարկված ապրանքային նշանը ենթակա է գրանցման:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ

կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված՝ «Chatham Imports, Inc.» ընկերության «FARMER'S» (IR1774495) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԱՆՈՒՇԻԿ ԱՎԵՏՅԱՆ